ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2012թ. հունվարի 19 թիվ 6 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 180-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 5-ի <<Աշտարակ քաղաքում հատուկ տակտիկական ցուցադրական ուսումնավարժության կազմակերպման և անցկացման մասին>> թիվ 180-Ա կարգադրության նախաբանը շարադրել նոր խմբագրությամբ .

<< Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշման պահանջներով և համաձայն <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011 թվականի հիմնական միջոցառումների պլանի>> 2011 թվականի դեկտեմբերի 12-ին կազմակերպել և անցկացնել հատուկ տակտիկական ցուցադրական ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանության կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմայով: Հատուկ տակտիկական ուսումնավարժության կազմակերպման և անցկացման նպատակով՝ կարգադրում եմ.>>:

2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ